

2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

2015 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» 2015 թվականի հանրապետական ստուգատեսների 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած համայնքներին և համայնքների բակերին հանձնվել են դրամական պարգևներ և մրցանակներ:

ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակ հիմնելու մասին» N° ՆԿ-113-Ն կարգադրության համաձայն մարտ ամսին ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան են ուղարկվել ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» ստուգատեսների կանոնակարգերը: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվել են ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ քաղաքաշինության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների համապատասխան մասնագետները: 2015 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից ստացված հայտերի հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում իրականացվել է պարգևատրումը:

2015 թվականի նոյեմբերի 3-5-ը ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում անցկացվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը, որին մասնակցել են ՀՀ մարզերում և Երևան քաղաքում առաջին տեղերը գրաված հանրակրթական դպրոցների թիմերը՝ թվով **99** աշակերտ: Խաղերի ծրագրում ընդգրկված էին 6 մրցաձևեր՝ նոնակի նետում (Ֆ-1 ուսումնական), ինքնաձիգի քանդում-հավաքում, ձգումներ պտտածողից, կրոսավազք (1000 մ), հրաձգություն (օդամղիչ հրացանով), 8 կգ-անոց ուսապարկով թիմային փոխանցումս վազք (4 x 50 մ, վիրավորի տեղափոխում պատգարակով):

Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր»-ի 4 փուլերին մասնակցել են ՀՀ 38 տարածաշրջանների և Երևան քաղաքի 12 վարչական շրջանների ընդհանուր թվով **31245** ավագ տարիքի դպրոցահասակ աշակերտներ: Հաղթողները և մասնակից թիմերը պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով, գավաթներով, նվերներով և շնորհակալագրերով:

2015 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ նախադպրոցական տարիքի երեխաների մասնակցությամբ անցկացվել է նոր մարզական մասսայական միջոցառում՝ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ»

մրցույթի եզրափակիչ փուլի մրցումները, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի՝ մրցույթի 2-րդ փուլի մրցումներին 1-ին տեղերը գրաված 11 նախադպրոցական հիմնարկների **110** երեխաներ: Սեպտեմբեր ամսին անցկացված՝ մրցույթի առաջին՝ համայնքային փուլին մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 232 նախադպրոցական հաստատությունների **2784** երեխա:

2015 թվականի սեպտեմբերի 10-26-ը ՀՀ 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում անցկացվել է հանրապետական մարզական փառատոնը, որին մասնակցել են **24125** մարդ: Ծրագրում ընդգրկված էին 7 մրցաձևեր՝ կշռաքարի բարձրացում, շախմատ, նարդի, ազգային կոխ-ըմբշամարտ, բազկամարտ, մինի ֆուտբոլ և 1000 մ մասսայական վազքարշավ: Հաղթողները պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համապատասխան հավաստագրերով, իսկ առաջին տեղ զբաղեցրածները՝ նաև մարզահագուստով:

2015 թվականի սեպտեմբերի 7-12-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում տեղի է ունեցել ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի եզրափակիչ փուլը, որտեղ ներկա է գտնվել Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը անցկացվել է հունիս-սեպտեմբեր ամիսներին չորս տարիքային խմբերով. 1-ին տարիքային խումբ՝ 6-8 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ, 2-րդ տարիքային խումբ՝ 9-11 տարեկան, 3-րդ տարիքային խումբ՝ 12-14 տարեկան, 4-րդ տարիքային խումբ՝ 15-16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (անկախ երեխաների սեռից):

Հունիսի 1-15-ը ՀՀ մարզերի քաղաքային համայնքներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջաններում և Երևան քաղաքի վարչական շրջաններում անցկացվել է մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցել են **2065** մարզական ընտանիքներ, հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը տեղի է ունեցել միջոցառման 2-րդ փուլը, որին մասնակցել են 1-ին փուլում հաղթած ընտանիքները:

Մրցույթի եզրափակիչ փուլին, բացի երկրորդ փուլում մրցանակակիր դարձած ընտանիքներից (**144 ընտանիք՝ 432 մարդ**), մասնակցել են նաև ՀՀ մարզերից, ԼՂՀ-ից և Երևան քաղաքի վարչական շրջաններից հաշմանդամություն ունեցող (հայրը կամ մայրը անվասայակով) **19 ընտանիք՝ 48 մարդ**: Միջոցառման մասնակից ընտանիքներն ըստ տարիքային չորս խմբերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող ընտանիքները պարգևատրվել են ՀՀ Նախագահի պատվոգրերով և դրամական մրցանակներով: Դրամական մրցանակներով պարգևատրվել են նաև առանձին մարզաձևերում մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած ընտանիքները, իսկ թիմային հաշվարկով ընդհանուր միավորներ հավաքած մարզերը պարգևատրվել են գավաթներով:

2015 թվականի օգոստոսի 10-17-ը իրականացվել են մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումները՝ մանկապատանեկան թիմերի, Երևան քաղաքի և մարզերի մարզադպրոցների ու ֆուտբոլի ակումբների մարզիչների համար, որին մասնակցել են **125** մարդ:

2015 թվականի մայիսի 21-22-ը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անցկացրել է մարզական զանգվածային միջոցառում՝ դատապարտյալ կանանց մասնակցությամբ: Մասնակիցները մրցել են ծրագրում ընդգրկված հետևյալ մրցաձևերով՝ բազկամարտ, վոլեյբոլ, վազք 30 մ, տեղից հեռացատկ, սեղանի թենիս: Հաղթողներն ու մրցանակակիրները պարգևատրվել են նախարարության հավաստագրերով, ինչպես նաև Աբովյանի քաղաքապետարանի կողմից սահմանված նվերներով:

2015 թվականի մայիսի 7-ին՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձի առթիվ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի մարզադահլիճում անցկացվել է «Սպորտլանդիա-2015» մարզական խաղեր միջոցառումը՝ Հայաստանի մանկատների ու գիշերօթիկ հաստատությունների սաների միջև:

Միջոցառմանը մասնակցել են Երևանի և հանրապետության մարզերի 10 մանկատների և գիշերօթիկ դպրոցների երեխաներ: Մասնակից թիմերի կազմել են 5 տղա և 5 աղջիկ, որոնք մրցել են ծրագրով նախատեսված 6 տարբեր մրցաձևերում:

Հաղթողները պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գավաթներով և հավաստագրերով, իսկ մրցույթի բոլոր մասնակից երեխաները նվերներ են ստացել նախարարության, ինչպես նաև “Word Vision Armenia” կազմակերպության մանկական զարգացման հիմնադրամի և «Ձանգակ» հրատարակչության կողմից:

2015 թվականի ապրիլի 8-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացրել է անվասայլակներով բասկետբոլի ցուցադրական խաղ՝ նվիրված Սպորտի միջազգային օրվան:

2015 թվականի ապրիլի 7-ից հանրակրթական դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, որին մասնակցել են՝ համայնքային փուլում 141 դպրոց, իսկ մարզային փուլում՝ 16 դպրոց: Միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել են **1692** աշակերտներ: